

իւրաքանչիւր հայու տունին տասը հոգի եւ իւրաքանչիւր քիւրդի տունին հինգ հոգի հաշուելով ունեցած է այնպիսի թիւ մը՝ որով հայերը մեծամասնութիւն կ'կազմեն: Այդ թիւն կ'հաստատէ նաեւ այն վիճակագրական տեղեկութիւնները, որք անցեալները պատրիարքարանէն հաղորդուեցան տէրութիւններուն:

**

—Կնի՛կ, Պօլսոյ մարդահամարը պիտի պատրաստեն եղեր:

—Ի՞նչ ընեմ:

—Քեզի ալ պիտի գրեն հարկաւ:

—Ինչո՞ւ:

—Դուն ալ մարդ չե՞ս:

—Ի՞նչու ուրեմն կ'ըսեն թէ «եւ եղիցին երկոքեան ի մարմին մի»:

—Վիճակագրութեան համար չէ ան, նօնօշիկս:

18 Օգոստոս

Հրդեհներուն առաջքն առնելու պաշտօնով մասնաժողով մը պիտի կազմուի:

Յանձնաժողով մ'ալ պիտի հաստատուի հրդեհները մարելու համար:

Մենք հիմա ուրիշ գործ չունինք. ամեն օր մասնաժողով, յանձնաժողով, մասնախումբ, յանձնախումբ կազմելէն զատ գործ տեսած չունինք:

**

Յունաստանի թագաւորն չվերադարձաւ տակաւին իւր երկիրը:

Եւրոպական քանի մը լրագիրներ կը ծանուցանեն, թէ Պ. Կլատսթօն խորհուրդ տուած է Գէորգ թագաւորին, որ ժամ առաջ Աթէնք վերադառնայ:

Գէորգ թագաւորը Ռուսիա ուղեւորեցաւ:

Եթէ Կլատսթօնի խորհուրդները միշտ այսպէս կը գործադրուին Յունաստանի կողմէ՝ շատ հաւանական է, որ քիչ ատենէն շփոթութիւն մը ծագի իրարու մէջ: